

ՍՈՆԱ ՍԱՐԳՍՅԱՆ

ԼԱԼԻԿ ԽԱՉԱՏՐՅԱՆ

**«ՁԻ» ԲԱՂԱԴՐԻՉՈՎ ԴԱՐՁՎԱԾՔՆԵՐԻ ԻՄԱՍՏԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԱՆԳԼԵՐԵՆԻ
ԵՎ ՀԱՅԵՐԵՆԻ ԼԵՐՎԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹՆԵՐՈՒՄ**

DOI: 10.24234/journalforarmenianstudies.v1i72.228

ԱՄՓՈՓՈՒՄ

Հոդվածում զուգադրական քննության է ենթարկվում «ձի» կոնցեպտը անգլերենի և հայերենի լեզվական մշակույթներում. բացահայտվում են ինչպես իմաստային ընդհանրություններ, այնպես տարբերություններ:

Ընդհանրությունները պայմանավորված են ձի կենդանու կատարած գործառույթներով և դրանց փոխաբերական իմաստավորումներով:

«Ձի» կոնցեպտը անգլերենի և հայերենի լեզվական մշակույթում բնորոշվում է դրական և բացասական հատկանիշներով:

Կոնցեպտի դրական հատկանիշների գնահատիչներից են խորամանկությունը, հարաբերականությունը, հնազանդությունը, հուսալիությունը, ուժը, իդեալին հասնելու միջոցի խորհրդանշանը, քաջագործությունը, չափավորությունը, լավագույն վիճակում լինելը, հաջողաբեր ազդակը, անխափանությունը և այլն:

Կոնցեպտի բացասական հատկանիշների գնահատիչներից են դանդաղկոտությունը, խորամանկությունը, համառությունը, ագրեսիվությունը, անփութությունը, անհնարինությունը, հոգնածությունը, շտապողականությունը, հիմարությունը, նախանձը, անարդարությունը, անշնորհակալությունը, թուլությունը, իր հաշիվների մեջ սխալվելը և այլն:

Անգլերենում «ձի» կոնցեպտը դարձվածային գործառական լայն հնարավորություններ ունի, որի բացը հայերենում լրացվում է այլ միավորներով ձևավորված դարձվածքներով:

Բանալի բառեր և արտահայտություններ. միջմշակութային հաղորդակցություն, դարձվածքների իմաստային-թեմատիկ խմբեր, «ձի» կոնցեպտ, կենդանանուն, դարձվածք, լեզվամշակույթ, լեզվամտածողություն, զուգադրություն, փոխաբերացում:

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Միջմշակութային հաղորդակցության ժամանակակից պայմաններում առաջնահերթություն է լեզվական իրողությունների զուգադրական քննությունը, որի տիրույթում են լեզվական ամենատարբեր իրակություններ: Այդ կարգի իրակություններ են դարձվածային միավորները:

Ըստ այդմ՝ մենք քննության առարկա ենք դարձնելու սոմատիկ բաղադրիչներով դարձվածքներն անգլերեն և հայերեն լեզվական մշակույթում՝ մասնավորապես դիտարկելով «ձի» բաղադրիչով ձևավորված դարձվածքների իմաստաբանությունը:

Հայ լեզվաբանության մեջ դարձվածքների ուսումնասիրության հարցը, կարելի է ասել, ավարտուն չէ (**Սուքիասյան Ա., 1999**):

Վ.Պ.Ժուկովը եզրակացնում է, որ դարձվածքն սկսվում է այնտեղ, որտեղ վերջանում է նրա բաղադրիչների իմաստային իրացումը (**Жыков В., 1978**):

Դարձվածքների իմաստային խմբերի մեջ առանձնացնում են՝ սոմատիկ դարձվածքներ, զոոնիմ (կենդանանունով) դարձվածքներ, մարդկային ամենատարբեր հատկանիշների անվանումներով դարձվածքներ, բնության երևույթների անվանումներով դարձվածքներ, ջրանուն և լեռնանուն բաղադրիչներով դարձվածքներ և այլն (**Խաչատրյան Լ., 2021**): Զոոնիմ կամ կենդանանուն բաղադրիչները մատնանշում են ինչպես ընտանի, այնպես էլ վայրի կենդանիներին (**Խաչատրյան Լ., 1996**): Զոոնիմ դարձվածքները սփռված են տարալեզու դարձվածաբանական բառարաններում, որոնք զգալի նյութ են պարունակում հետազոտության համար:

ՄԵԹՈՂԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Հետազոտությունն իրականացվել է՝ հիմք ընդունելով լեզվաբանության համընդհանուր սկզբունքներն ու ուսումնասիրման առանձնահատկությունները,

ինչպես նաև հաշվի առնելով անգլերենի ու հայերենի կոնտեքստային յուրահատկություններն ու դրանց համապատասխան իմաստային արտացոլումը տվյալ լեզվական մշակույթում: Ըստ այդմ՝ հետազոտությունը կատարվել է համադրական-վերլուծական և զուգադրական մեթոդներով:

ՔՆՆԱՐԿՈՒՄ

Տարբեր լեզուներում զգալի թվով կենդանանուն բաղադրիչով դարձվածքներն ունեն իրենց լրիվ կամ մասնակի համարժեքները. դրանք կոչվում են «մշակութային ունիվերսալիաներ»: Մյուս կողմից՝ շատ կենդանանուններ պարունակում են որոշակի իմաստային տարրեր, որոնք հասկանալի են միայն տվյալ լեզվական մշակույթը կրողներին (**Ջահուկյան Գ., 1974**):

Դիտարկենք «ծի» բաղադրիչով կենդանանուն դարձվածքները անգլերենի և հայերենի լեզվական մշակույթներում:

Անգլերենի և հայերենի դարձվածքներում «ծի» հասկացույթը (կոնցեպտը) ցուցաբերում է փոխաբերական մի շարք իմաստներ, որոնք դասակարգվում են երկու խմբի՝ իբրև դրական և բացասական հատկանիշների գնահատիչներ (**Լызлов А., 2023**):

Ա. Կոնցեպտի դրական հատկանիշների գնահատիչներ են. խորամանկությունը, հարաբերականությունը, հնազանդությունը, հուսալիությունը, ուժը:

Խորամանկություն. *He is ready to lend the horse who has never had one* դարձվածաբանական միավորով գնահատվում են այն մարդիկ, որոնք իրենց խոսքի տերը չեն: Այն մարմնավորում է «մարդը հեշտությամբ բաժանվում է անձանոթ ձիուց» փոխաբերական մոդելը, որը «մարդը պատրաստ է բաժանվել այն ամենից, ինչը իրենը չէ» հիմնական կաղապարի ուղեկիցն է:

Հայերենում դրա համարժեքն է՝ *Տրոյական կամ Տրովադայի ձի* – խարդավանք, խորամանկորեն լարված որոգայթ: Հմմտ. «Եվ նրանք ձգտում էին իրենց այդ նենգ նպատակին հասնել գաղափարախոսությունների խաղաղ գոյակցության քարոզով, այդ «տրոյական ձիու» օգնությամբ» (**Սուքիասյան Ա., Գալստյան Ս., 1975**):

Հարաբերականություն. «Լավ մարդը ոչ միշտ է օժտված հրաշալի արտաքին տվյալներով» հիմնային կաղապարը մարմնավորվում է «Լավ ձին օժտված չէ հրաշալի արտաքին տվյալներով» փոխաբերական կաղապարի մեջ. *a short horse is soon curried*: Գնահատման հարաբերական բնույթը նկարագրում են հետևյալ դարձվածաբանական միավորները՝ *a good horse cannot be of bad colour; a horse is neither better nor worse for his trapping; the biggest horses are not the best travelers*: Բոլոր օրինակների գաղափարը մեկն է. «չի կարելի պատկերացում կազմել անձի ներքին հատկանիշների մասին՝ ելնելով արտաքին տվյալներից»:

«Ամեն ինչ հարաբերական է» հիմնային կաղապարից բխում է հետևյալ փոխաբերական կառույցը՝ «*Հասուն ձին այլևս քունակ չէ*» - *an inch of horse is worth a span of a colt*: Այստեղ առկա է «երիտասարդություն-հասունություն» փոխաբերական հակադրությունը:

Իրերի հարաբերական բնույթն արտահայտում է նաև «*Մարդը և ձին նույնական չեն*» - *a man is born in a stable that does not make him a horse* դարձվածաբանական միավորը: Սրա հիմքում այն գաղափարն է, որ անձի որակական հատկանիշները չեն որոշվում նրա ծագմամբ: *There is nothing so good for the inside of a man as the outside of a horse* դարձվածաբանական միավորը մարդկային էության քննադատությունն է:

Հարաբերականության գաղափարն արտահայտվում է նաև *ձի - էջ հակադրության* համատեքստում: Հմմտ. *Ձիուց իջնել՝ էջ նստել* - «նախկինում ունեցած բարձր աստիճանը կորցնել և իջնել ցածր աստիճանի»:

Հնազանդություն. Ձին ոչ միայն ուժի մարմնավորում է, այլև անհնազանդության, որն արտահայտվում է հետևյալ փոխաբերական կաղապարով՝ «Լավ ձիուն պետք են լավ սանձեր և խթաններ», սա էլ իր հերթին ձևավորում է հետևյալ կաղապարը՝ «Լավ մարդ դաստիարակելու համար պետք է նրան հնազանդեցնել և ցուցաբերել խստություն» - *a boisterous horse must have a rough bridle; a good horse needs a good spur; a resty horse must have a sharp spur*.

Անհնազանդությանը հաջորդում է պատիժը, որն արտահայտվում է հետևյալ դարձվածաբանական միավորով՝ *a horse that will not carry a saddle must have no oats*;

it is a bridle and spur that makes a good horse: Անգլիացիների մանկավարժական հայացքներն առարկայանում են հետևյալ դարձվածաբանական միավորով՝ *a colt you may break, an old horse you never can.* «Երբ դաստիարակությունը կառուցվում է խիստ հնազանդեցման գաղափարների համաձայն, հետևաբար դաստիարակում են խստորեն. գերակշռում է նաև պատիժը»:

Հուսալիություն. *All lay the load to a willing Horse* դարձվածաբանական միավորն արտահայտում է՝ «այն մարդը, ով չի կարողանում պաշտպանել իր իրավունքները, ստիպված է աշխատել ուրիշների համար» հիմնային կաղապարը: Նրա փոխաբերական կաղապարն ունի հետևյալ տեսքը՝ «աշխատասեր ձին աշխատում է բոլորից շատ»:

Ուժ. Անգլերենում ուժի գաղափարն արտահայտվում է հետևյալ հիմնային կաղապարներով. *as strong as a horse; good horses make short miles* - «Ուժեղ ձին արագ է կատարում աշխատանքը», «Լավ ձին ճանապարհը կարճացնում է»: Հայերենում դրան համարժեք է «Մարդը կարող է ձիու պես ուժեղ լինել» ոչ դարձվածային կապակցությունը:

Բ. «Ձի» կոնցեպտի բացասական հատկանիշների գնահատիչներ են. դանդաղկոտությունը, համառությունը, ագրեսիվությունը, անմտությունը, անփութությունը:

Դանդաղկոտություն. «Ուշ է անհանգստանալ, երբ արդեն տեղի է ունեցել անախորժությունը» հիմնակաղապարն արտացոլվում է «Ուշ է անհանգստանալ անհետացած ձիու համար» փոխաբերական կաղապարի մեջ. *it is too late to shut a stable door after the horse has bolted; it is too late to shut a stable door after the horse is stolen:* Դարձվածաբանական միավորների հիմքում տարբեր իրադարձություններն են. առաջին դեպքում ձին անհետանում է տիրոջ անուշադրության պատճառով, երկրորդում՝ ձիու տերը դառնում է գողության զոհ:

Համառություն. «Համառ ինչպես ձի» փոխաբերական կաղապարը անգլերենում արտահայտվում է հետևյալ դարձվածքով. *you can take (lead) a horse to the water, but you can't make him drink:* Դարձվածաբանական միավորի գաղափարն է՝ առանց

մարդու ցանկության՝ անհնար է նրան ստիպել աշխատել: Անկառավարելի մարդը համեմատվում է չհեծած ձիու հետ՝ *wild horses would not drag (pull away)*, որը չի ցանկանում աշխատել:

Հայերենի համարժեքները. *Թարս ձի նստել* – համառել (Էսօր *թարս ձի է նստել*. Ինչ ասում են, չի լսում): Հմմտ. Մինակ Արսենը *թարսին ձին իր իլավ...: Իր ձին քշել* - Իր ցանկացածն ու գիտեցածն անել, համառել՝ ուշադրություն չդարձնելով ուրիշի ասածներին, ուրիշին չանսալ, չլսել, կամակորել. Էլի մերը *իր ձին քշեց*, իր ասածն արեց ու Աղասուն չթողաց (**Բեդիրյան Պ., 2011**):

Ազդեսիվություն. «Մարդը կարող է վտանգավոր լինել» հիմնակաղապարն արտահայտվում է «կենդանիները վտանգ են ներկայացնում» փոխաբերական կաղապարի մեջ. անգլերենում՝ *three things are not to be trusted: a cow's horn, a dog's tooth and a horse's hoof*. Այս դարձվածաբանական միավորով ձին ներկայացվում է որպես տնային վտանգավոր կենդանի:

Հայերեն համարժեքները. *Ձի քշել մեկի վրա* - ճնշում գործադրել, հարձակվել, հոխորտալ մեկի վրա (Զուր ես վրաս ձի քշում, ես քեզանից վախեցողը չեմ (**Բեդիրյան Պ., 1973**)):

Անմտություն. «Պետք չէ ցավ պատճառել սատկած ձիուն» փոխաբերական կաղապարը «Պետք չէ կատարել անմիտ գործողություններ» հիմնակաղապարի արտացոլումն է: *Don't beat a dead horse; never (don't) spur a willing horse* դարձվածաբանական միավորը կոչ է անում չնմանվել այն մարդուն, ով ծեծում է խելոք կամ սատկած ձիուն: *Hobby-horse* դարձվածաբանական միավորը թարգմանվում է որպես անմիտ ձեռնարկում:

Անփութություն. «Օտար ձին ամենից վատ է պահպանված» փոխաբերական կաղապարը կիրառվում է որպես «մարդը չի ցանկանում գնահատել այլոց ունեցվածքը» բազային կաղապարին ուղեկից: *A hired horse is never tired; the common horse is worst shod; a pair of good spurs to a borrowed horse is better than oats* դարձվածաբանական միավորում ներկայացվում է գործնական (օգտապաշտական) գնահատումը:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Դարձվածքների իմաստային-թեմատիկ խմբերի մեջ առանձին տեսակ են կազմում կենդանանուն բաղադրիչով դարձվածքները, մարդկային ամենատարբեր հատկանիշների անվանումներով դարձվածքներ, բնության զանազան երևույթների անվանումներով դարձվածքներ և այլն: Դրանց մեջ գերակշիռ մաս են կազմում կենդանիների անուններով զոոնիմներով դարձվածքները, որոնք անգլերենում և հայերենում փոխաբերացման լայն շերտ են ներկայացնում:

Ջուգադրական քննության ենթարկելով «Ձի» կոնցեպտը անգլերենի և հայերենի լեզվական մշակույթում՝ բացահայտվում են ինչպես իմաստային ընդհանրություններ, այնպես էլ տարբերություններ, որոնք պայմանավորված են տարբեր լեզվակիր հանրությունների լեզվամտածողական յուրահատկություններով:

Ընդհանրությունները պայմանավորված են ձի կենդանու կատարած գործառույթներով և դրանց փոխաբերական իմաստավորումներով, որ ընդհանուր բնութագիր ունի ագլերեն և հայերեն լեզվակիրների համար, իսկ իմաստային տարբերությունները պայմանավորված են այդ կենդանու գործառույթների սահմանափակվածությամբ, որ տարբեր արտացոլումներ է սովել դարձվածային կառույցներում:

«Ձի» կոնցեպտը անգլերենի և հայերենի լեզվական մշակույթում բնորոշվում է դրական և բացասական հատկանիշներով, որոնք արտահայտվում են համապատասխան կառուցատիպով դարձվածքներում:

«Ձի» զոոնիմով դարձվածքների զուգադրական քննությունը կարևորվում է միջմշակութային իրողությունների քննության համատեքստում, որ կարող է ամբողջացնել զոոնիմ դարձվածքների նկարագրությունը ինչպես ներլեզվական, այնպես էլ միջլեզվական հարթություններում:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. **Բեդիրյան Պ. (1973)**, Ժամանակակից հայերենի դարձվածաբանություն, Երևան, «Լույս» հրատ.:

2. **Բեդիրյան Պ. (2011)**, Հայերեն դարձվածքների ընդարձակ բառարան, Երևան, ԵՊՀ հրատ.:
3. **Խաչատրյան Լ. (1996)**, Խոսքի մասային տարարժեքությունն արդի հայերենի կայուն կապակցություններում, Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ.:
4. **Խաչատրյան Լ. (2021)**, Լեզվաբանական տերմինների ուսումնական բառարան, Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ.:
5. **Ջահուկյան Գ. (1974)**, Ժամանակակից հայերենի տեսության հիմունքները, Երևան, Հայկական ՍՇ Գիտությունների ակադեմիայի հրատ.:
6. **Սուքիասյան Ա. (1999)**, Ժամանակակից հայոց լեզու, Երևան, ԵՊՀ հրատ.:
7. **Սուքիասյան Ա., Գալստյան Ս. (1975)**, Հայոց լեզվի դարձվածաբանական բառարան, Երևան, ԵՊՀ հրատ.:
8. **Жуков В. (1978)**, Семантика фразеологических оборотов, Москва: “Просвещение”.
9. **Лызлов А. (2023)**. Фразеологический концепт «лошадь» в англоязычном словаре и художественном тексте. Вестник ВГУ. Серия: Лингвистика и межкультурная коммуникация, 84-92.
<https://cyberleninka.ru/article/n/frazeologicheskiy-kontsept-loshad-v-angloyazychnom-slovarе-i-hudozhestvennom-tekste/viewer>

REFERENCES

1. **Bediryan P. (1973)**, Jhamanakacic hayereni dard'vac'abanowt'yown /Modern Armenian Idiomatics/, Yerevan, “Luys” pub.
2. **Bediryan P. (2011)**, Hayeren dard'vac'qneri y'ndard'ak bar'aran /Extensive Dictionary of Armenian Idioms/, Yerevan, YSU pub.
3. **Khachatryan L. (1996)**, Xosqi masayin tararjheqowt'yownn ardi hayereni kayown kapakcowt'yownnerowm /Part-of-speech Variation in Stable Connections of Modern Armenian/, Yerevan, RA NAS “Gitutyun” pub.

4. **Khachatryan L. (2021)**, Lezvabanakan termineri owsowmnakan bar'aran /Educational Dictionary of Linguistic Terms/, Yerevan, RA NAS “Gitutyun” pub.
5. **Jahukyan G. (1974)**, Jhamanakakic hayereni tesowt'yan himownqneri' /Fundamentals of the Theory of Modern Armenian/, Yerevan, Haykakan SSH AS pub.
6. **Sukiasyan A. (1999)**, Jhamanakakic hayoc lezow /Modern Armenian language/, Yerevan, YSU pub.
7. **Sukiasyan A., Galstyan S. (1975)**, Hayoc lezvi dard'vac'abanakan bar'aran /Phraseological dictionary of the Armenian language/, Yerevan, YSU pub.
8. **Zhukov V. (1978)**, Semantika frazeologicheskikh oborotov /Semantics of phraseological turns/, Moscow, “Prosveshenie” pub.
9. **Lyzlov A. (2023)**, Frazeologicheskiy kontsept «loshad'» v angloyazychnom slovare i khudozhestvennom tekste /Phraseological concept "horse" in the English dictionary and artistic text/. Bulletin of VGU. Series: Linguistics and intercultural communication, 84-92, <https://cyberleninka.ru/article/n/frazeologicheskiy-kontsept-loshad-v-angloyazychnom-slovare-i-hudozhestvennom-tekste/viewer>

Сона Саркисян

Лалик Хачатрян

Семантика фразеологизмов с компонентом «лошадь» в английской и армянской лингвокультурах

Заключение

Ключевые слова и выражения: межкультурная коммуникация, семантико-тематические группы фразеологизмов, концепт «Лошадь», название животного, фразеологизм, языковая культура, языковое мышление, сопоставление, метафора.

В статье исследуется концепт «Лошадь» в лингвокультуре английского и армянского языков, в результате чего выявляются как смысловые общности, так и различия.

Сходства обусловлены универсальными явлениями, которые выполняются лошадью в жизни человека, а также ее устойчивыми метафорическими значениями, во многом совпадающим в обеих культурах. В то же время семантические различия объясняются ограниченностью или спецификой использования данного образа в каждом языке, что приводит к различным способам его отражения в структуре словосочетаний и фразеологических единиц.

Концепт «лошадь» характеризуется как положительными (сила, выносливость, надежность), так и отрицательными (упрямство, агрессивность, неразумность) чертами. В английском языке данный концепт обладает более широкими функциональными возможностями, тогда как в армянском языке отдельные значения передаются с помощью других зоонимов.

Сравнительное изучение таких единиц имеет важное значение для понимания межкультурных различий и сходств и способствует более полному описанию зоонимических фразеологизмов, а также расширяет представление о национально-культурной специфике языкового мышления носителей обоих языков, их ценностных ориентирах и особенностях восприятия окружающей действительности.

Sona Sargsyan

Lalik Khachatryan

The semantics of phraseology with the component "horse" in english and armenian linguocultures

Conclusions

Keywords and expressions: *intercultural communication, semantic-thematic groups of phraseological units, "Horse" concept, animal name, phraseology, language culture, language thinking, juxtaposition, metaphor.*

This article examines the concept of "horse" in the linguistic cultures of English and Armenian, revealing both semantic similarities and differences.

The similarities stem from the universal functions of horses in human life, as well as their enduring metaphorical meanings, which are largely shared across both cultures. Meanwhile, the semantic differences stem from the limited or specific use of this image in each language, leading to different ways of reflecting it in the structure of phrases and lexical units.

The concept of "horse" is characterized by both positive (strength, endurance, reliability) and negative (stubbornness, aggressiveness, unreasonableness) traits. In English, this concept has broader functional possibilities, while in Armenian, certain meanings are conveyed through other zoonyms.

A comparative study of such units is important for understanding intercultural differences and similarities and contributes to a more complete description of zoonymic phraseological units, as well as expands the understanding of the national-cultural specificity of the linguistic thinking of speakers of both languages, their value orientations and the peculiarities of perception of the surrounding reality.

Սոնա Սարգսյան – Երևանի պետական համալսարանի Հայոց լեզվի պատմության և ընդհանուր լեզվաբանության ամբիոնի ասպիրանտ:
sonsar999@gmail.com

Լալիկ Խաչատրյան - Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ լեզվաբանական հետազոտությունների գիտական լաբորատորիայի վարիչ, բան. գիտ. դոկտոր, պրոֆեսոր:

Сона Саркисян – аспирант кафедры Истории армянского языка и общей лингвистики Ереванского государственного университета. sonsar999@gmail.com

Լալիկ Խաչատրյան - Заведующий научной лабораторией лингвистических исследований АГПУ им. Х. Абовяна., д.ф.н., проф.

Sona Sargsyan – PhD candidate at the Chair of Armenian Language History and General Linguistics. sonsar999@gmail.com

Lalik Khachatryan - The head of scientific laboratory for linguistic research at Kh. Abovyan ASPU, Doctor of Sciences in Philology, professor.

Խմբագրություն է ուղարկվել 27.02.2026թ.

Հանձնարարվել է գրախոսության 14.03.2026թ.

Հրատարակման է ներկայացվել 31.03.2026թ.